18 փետրվարի 2009 թվականի N 113 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 820-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածը՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2008 թվականի հոկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության մի շարք օրենքների կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկերը հաստատելու մասին» N 820-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման N 1 հավելվածի ցանկի 2-րդ կետի «Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու ժամկետը» սյունակում «2008 թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ» բառերը փոխարինել «2009 թ. մարտի 1-ին տասնօրյակ» բառերով.

2) որոշման N 2 հավելվածի ցանկի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

NN ը/կ	Իրավական ակտի վերնագիրն ու տեսակը	Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու համար պատասխանատու պետական կառավարման մարմինը	Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու ժամկետը	Իրավական ակտի ընդունման առնչությամբ իրականացվող միջոցառումների ֆինանսական ապահովման

				աղբյուրը
1	2	3	4	5
1.	«Չափագրումների իրականացման նպատակով առանձին ապրանքատեսակների արտադրության և իրացման, օգտակար հանածոների արդյունահանման սեզոնայնության չափանիշները և ժամկետները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ ֆինանսների նախարարություն	2009 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2009 թ. փետրվարի
Երևան